ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-ՈՒՄ

Պրոֆ. Ս. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ, առաջաբանով, ծանոթագրություններով լույս է տեսել «Կանոնագիրք Հայոց» գրքի առաջին հատորը[1]։ Պարբերական մամուլում լույս տեսած գրախոսություններում ըստ արժանվույն գնահատված է այդ ուշագրավ գործը։

Սույն հոդվածում մենք կաշխատենք ցույց տալ, թե ինչպիսի անգնահատելի սկզբնաղբյուր է գա վաղ ֆեոդալիզմի պատմաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական, իրավա-քաղաքական կյանքի, դասակարգային հակամարտությունների, սոցիալական շարժումների, հայ ժողովրդի զրաղմունքի, նիստ ու կացի, սովորույթների և բաղմաքանակ այլ հարցերի ուսումնասիրության համար։ Հայտնի է, որ Հայաստանում III դարի վերջին, այսինքն այն ժամանակ, երբ արդեն իշխող էր դարձել արտադրության ֆեոդալական եղանակը, քրիստոնեությունը հռչակվեց որպես պետական կրոն։ Սկսած վաղ ֆեոդալիզմի դարաշրջանից, հայ եկեղեցին իր քաղաքական գերիշխանությանն է ենթարկում և իր ձեռքում կենտրոնացնում «Հայոց տան» իրավագիտական, օրենսդրական և «գործակալութեան մեծի դատաւարութեան» իշխանությունը։ Արշակունիների անկումից հետո Հայաստանի քաղաքական և օրենսդրական կենտրոններն են դառնում եկեղեցական կամ «ազգային» ժողովները։ Այդ ժողովներում քննարկվում և հաստատվում են ոչ միայն եկեղեցու ներքին կյանքին վերաբերող, այլև աշխարհիկ բնույթի բաղմաթիվ հարցեր։ «Ազգային» ժողովներում մշակվում և հաստատվում են հանցանքների տեսակները, սահմանվում պատիժների չափերը, մշակվում են համապատասխան կանոնական որոշումներ, որոնք վերաբերում են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների, սրանց և անմիջական նյութական բարիքներ արտադրողների միջև առաջացած հարաբերությունների, հողատիրության կենտրոն պրոբլեմի, ընտանեկան հարաբերությունների և այլն կարգավորման։ Հայտնի է, որ մինչև «հայաբարբառ», «հայախօս» կանոնների հանդես գալը թարգմանվել և Հայաստանում լայն տարածում էին գտել «Սահմանք եւ կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի», «Երկրորդ առաքելական», «Կանոնք յետ առաքելոց», «Կանոնք Նիկիական», «Կանոնք Անկիւրեայ», «Կանոնք Կեսարեայ», «Կանոնք Նէոկեսարեայ», «Կանոնք Գանգրայ», «Կանոնք Անտիոքայ», «Կանոնք Լաւոդիկեայ», «Կանոնք Սարդիկեայ», «Կանոնք Կոստանդնուպալսի ժողովոյն», «Կանոնք Եփեսոսի ժողովոյն», «Կանոնք Աթանասի», «Կանոնք Բարսեղի» անուններով հայտնի կանոնները։ Չնայած թարգմանված և Հայաստանում լայն տարածում գտած օտարաբան կանոնական որոշումները կարգավորում էին մարդկանց մեջ ստեղծված շատ ու շատ հարաբերություններ, սակայն սկսած IV դարից հայ ֆեոդալական

[1] *Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, խմբագրությամբ՝ Հ. Ս. Անասյանի, Եվ. Ա. Պիվազյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1964։*

իրականությունը օրենսդիրների առաջ հրամայական պահանջ է առաջադրում ստեղծել նաև «հայաբարբառ» կանոններ։

Այս կանոնական որոշումներից մեզ են հասել Գր. Լուսավորչի (IV դար), Աշտիշատի ժողովի (354 թ.), Սահակ Պարթևի (IV դար), Շահապիվանի ժողովի (447 թ.), Հովհան Մանդակունու (V դար), Կարինի ժողովի (VI դար), Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյան եպիսկոպոսի (VI դար), Ներսես կաթողիկոսի (VI դար), Սահակ կաթողիկոսի (VI դար) և Հովհաննես Իմաստասեր Օձնեցու (VIII դար) կանոնները։

Բազմաթիվ ու բազմապիսի կանոնների ու կանոնական որոշումների գոյության հանգամանքը պահանջ է հարուցում հավաքել, դասակարգել դրանք և ստեղծել մեկ ամբողջական կանոնագիրք։

Այս դժվարին գործն իր ձեռքն է վերցնում VIII դարի սկզբին հանդես եկած, իր ժամանակաշրջանի կրթված, բազմակողմանիորեն զարգացած, եկեղեցական և քաղաքական ակտիվ գործիչ Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը։

«Կանոնագրքի» կազմողը քաջ գիտակցել է իր ձեռնարկած գործի և՛ դժվարությունները, և՛ նշանակությունը։ «Կազմեցին սուրբ հարքն,— գրել է Օձնեցին,— զկանոնական բանից դիտաւորութիւն...։ Եւ վասն զի ոմանք առ ոմանս եւ ոչ ամենքին առ ամենեսեան սոքա սերմանեալք, կամեցայ զրովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել»[2]։

Արդեն վերը նշվեց, որ «Կանոնագրքի» շատ հոդվածներ, որոնք քաղաքացիական օրենսդրության ուժ ունեին, իրավական կարգավորման տակ են առնում հայ ֆեոդալական հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի շատ ու շատ հարցեր։ Եթե փորձենք համախմբել, դասակարգել և բաղդատել նրա բազմաթիվ էջերում ցրված բազմաքանակ կանոնական որոշումները ըստ բովանդակության կամ նյութի, ապա դրանք կարելի է ստորաբաժանել հետևյալ հիմնական խմբերի.

1. Հայ ժողովրդի նիստ ու կացը, կենցաղը և սովորույթները։

Մի շարք կանոնական որոշումներից ակնհայտ է դառնում, որ քրիստոնեության մուտքից հետո էլ դեռևս Հայաստանում շատ ուժեղ և կենսունակ էին հեթանոսական սովորույթները, ծեսերը։ Այս սովորույթների, ծիսակատարությունների դեմ բազմաթիվ կանոններ են հաստատել քրիստոնեական վարդապետության առաքյալները։ Այսպես, օրինակ, Առաքելական, Բարսեղ Կեսարացու, Աթանասի, Սահակ Պարթևի, Շահապիվանի ժողովի կողմից մշակված և այլ կանոններում խիստ կերպով դատապարտվում են հեթանոսական հին սովորությունները, ծեսերը։ Մի շարք կանոններում ասված է, որ «Կարգեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ», որ եթե որևէ հավատացյալ, լինի հոգևորական թե աշխարհիկ՝ «երթայ առ կախարդս եւ հարցուկս, եւ քաւդեայս, եւ վհուկս, եւ հաւատայ ծննդոց եւ աստեղագիտութեանց» կամ «երկիր պագանէն արարածոց փոխանակ Արարչին», ոչ միայն իրավունք չունի եկեղեցի մտնել, այլև պետք է դատապարտվի, իսկ եթե կրոնավոր է՝ անհապաղ պետք է կարգալույծ արվի[3]։

---

2 Նույն տեղում, էջ 535—536։
3 Նույն տեղում, էջ 37—38։

Աթանաս Աղիքսանդրացու կանոններում դատապարտվում են այն բոլոր Հավատացյալները, որոնք «հեթանոսաբար, անյուսութեամբ եւ անառակութեամբ, փողովք եւ լկտութեամբ, պարուք» կոծ են անում իրենց զավակների, հարազատների դիակների վրա, ովքեր լաց ու կոծի ժամանակ ճակատները դետնին են զարկում, արյուն են հանում և չեն ունկնդրում «ձայնի խրատու քահանայիցն, այլ թշնամանել եւս եւ մերժել յինքեանց զքահանայսն անյուսութեան բանիւք...»[4]:

Առաքելական կանոնները այդ կարգի հեթանոսների համար նախատեսում են պատժի հետևյալ տեսակներ. նախ պահանջում են նրանց դարձի բերել, իսկ եթե դարձի չեն գալիս, իրավունք է վերապահվում «արտաքոյ եկեղեցւոյ առնել...»։ Եթե որևէ հավատացյալ, սահմանել է Բարսեղ Կեսարացին, «ընդ հեթանոսի պոռնկեաց», նա եկեղեցու գիրկը կարող է վերադառնալ միայն յոթ տարի ապաշխարելուց հետո, իսկ եթե կրոնավոր է՝ կարգալույծ է արվում[5]։

Եկեղեցու սկզբունքներին խորթ նախաքրիստոնեական սովորությունների, հեթանոսական շրջանից եկած նիստուկացի, ընտանեկան հարաբերությունների, ծիսակատարությունների, խաղերի, պարերի և այլ երևույթների դեմ ամենից դաժան պատժիչ միջոցներ են նախատեսվում Շահապիվանի ժողովի կողմից մշակված կանոններում։

Արդար և ճշմարիտ օրենսդիր առաջնորդների և մանավանդ «Սահակայ Հայոց կաթողիկոսի եւ հոգելից, հոգեկիր, ճշմարտասէր վարդապետին Մեսրովբայ» մահից հետո, ասված է Շահապիվանի ժողովի հրավիրման դրդապատճառների մասին, «լինէր եղծումն եւ քայքայումն կարգաց եւ աւրինաց սրբոյ եկեղեցւոյ...»։ Հայ եկեղեցու «եղծման և քայքայման» հիմնական պատճառները ժողովը համարում է Հայաստանում լայն տարածում գտած բազմաթիվ «պղծութիւնք»։ Սակայն այդ դանազան պղծություններից ավելի ահավոր էր «Մծղնէից եւ այլոց չարեաց՝ կնահանէից, պոռնկաց, գողոց, անձնակամակաց. ամենայն խոտորնակ» այն աղանդը, որը լայն տարածում էր գտել «յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորգոմայ»[6]։

Շահապիվանի ժողովին հավաքված աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները մշակում և հաստատում են մի շարք կանոններ՝ Հայաստանում լայն տարածում գտած «հակահասարակական» երևույթները արմատախիլ անելու, հայ ֆեոդալական եկեղեցու հեղինակությունը պահպանելու համար։

Ժողովն աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների պիղծ, այլասերված վարքի ու բարքի, շահատակությունների, ամուսնալուծության, առևանգումների, կախարդության, հմայության, մերձամուսնության, մենակեցության, մահացածների վրա լաց ու կոծ անելու և մծղնեական աղանդի վերաբերյալ մշակում և հաստատում է մի շարք կանոններ։

Շահապիվանի կանոնները նույնպես դատապարտում են հեթանոս սովորությունները, ծիսակատարությունները։ Այստեղ հեթանոսական սովորություններ կրողների համար նախատեսված են ավելի դաժան պատիժներ՝ ծեծ, մրել, քարկոծել, աղվեսդրոշմ խարանել, տուգանել և այլն։ Եթե հավատացյալները, սահմանված է Ը կանոնում, բռնվեն «ի կախարդութեան», «...յուրացութեան», կամ

4 Նույն տեղում, էջ 304—305։
5 Նույն տեղում, էջ 349։
6 Նույն տեղում, էջ 425—426։

«յայլ չարագործութեանս» մեջ և «պղջումն եւ յապաշխարութիւն ոչ եկեսցենս» նրանց «ըստ գրոց հրամանի» պետք է «քարկոծ» անել։ Եթե քրիստոնյաներն «...ի հարցուկս երթան կամի գիւթել՝ տուգան կալցին. եթէ ազատ է՝ Մ(200) դրամ, եթէ շինական է՝ զան արրցէ ԺԵ կրկին, Ճ(100) դրամ տուգան կալցին եւ... Գ. ամս ապաշխարեալ՝ հաղորդեսցին։ Ապա եթէ եպիսկոպոս կամ երէց երթեալ իցեն ի հարցուկսն... եպիսկոպոսն յեպիսկոպոսութենէն անկցի եւ երէցն յերիցութենէն լուծցի»։ Հանցապարտ եպիսկոպոսի, երեցի համար նախատեսվում է նաև դրամական տուգանք։ Հանցանքի մեջ բռնված եպիսկոպոսը պետք է վճարի Ռ (1000), երեցը՝ Շ (500) դրամ տուգանք։ Բրավունք է վերապահված գյուղի, կախարդող, հարազատների վրա լաց ու կոծ անող կանանց ոչ միայն խանձել, մրել, այլև «ոսկր արկցեն եւ յարկանոց տացեն՝ Գ ամս աղասցեն զողեացն եւ զինչ եւ հրամայեսցեն գործելյ»[7]։

2. **Ընտանեկան հարաբերություններ**: «Կանոնագիրք Հայոց»-ում զգալի տեղ է հատկացված կանանց և տղամարդկանց հարաբերություններին, ընտանեկան հարցերին, երեխաների դաստիարակությանը։ Կանոնական որոշումներում կինը դիտված է որպես հասարակության ոչ իրավահավասար անձ։ Ուշագրավ է, որ «հանցապարտ», «օրինազանց» կնոջ համար նախատեսված են ավելի դաժան պատժի միջոցներ, քան նույն հանցանքը գործած տղամարդու համար։ Առաքելական և եկեղեցական բոլոր ժողովներում մշակված բազմաթիվ կանոնները միայն ապաշխարություն են սահմանում այն հայրերի համար, որոնք պատժում են իրենց կամքը չկատարող դուստրերին, և այն տերերի համար, որոնք անարգում, բռնաբարում կամ թե մահապատժի են ենթարկում իրենց մոտ ծառայության մտած կին ծառա-աղախիններին։ «Արտաքոյ կամացն տեառնն» աղախնու ամուսնությունը համարվել է պոռնկություն։ Եթե որևէ աղախին, սահմանել է Բարսեղ Կեսարացին, «...արտաքոյ կամաց տեառնն իւրոյ ամուսնասցի՝ ի պոռնկութիւն համարեալ է...»[8]։ Այդ նույն կանոնն արգելում է հոգևորականներին ամուսնանալ աղախինների հետ[9]։

Շահապիվանի ժողովը հաստատում է մի շարք կանոններ մերձամուսնության դեմ։ Բոլոր կանոններում էլ այս ակտը համարվում է սովորույթ «հեթանոսաց եւ անաստուած ամպարիշտ ազգաց»։ Եթե, սահմանված է ԺԲ կանոնում, «զկին հաւր որդի ունիցի» կամ «հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբաւր» կամ «հարազատի և զազգականի», եթե հանցապարար տղամարդն է, ապա նա հալածվում է, անիծվում և յոթ տարի ապաշխարելուց և դրամական տուգանք վճարելուց հետո կարող է վերադառնալ եկեղեցու գիրկը, իսկ եթե հանցապարտը կին է և նրա «կամաւք իցէ խառնակութիւնն՝ զպատուհասն եւ զտուգանս և զնզովս զնոյն կրեսցէ եւ յապաշխարհութիւն կալցին զկինն եւ յարկանոց տացեն, Ժ տարի աղասցէ զողեացն, ապա եթէ ազատ է եւ ի գողիսն երթայ՝ Յ (300) դրամ տացէ նոցա»[10]։

ԺԳ կանոնը պատվիրում է չամուսնանալ քրոջ, քեռորդու, եղբորորդու կամ «զայլ որ յազգի անգ իւրում մինչեւ ի չորրորդ ծնունդն...»։ Կանոնը միաժամա-

7 Նույն տեղում, էջ 440—443։

8 Նույն տեղում, էջ 348։

9 Նույն տեղում, էջ 431—432։

10 Նույն տեղում, էջ 444—446, հմմտ. նաև էջ 297 և հտ.։

նակ պահանջում է. «ի կարգէ պաշտաւնէից» հեռացնել այն հոգևորականին, որո «այնպիսեացն պսակ աւրհնեսցէ...»[11]։

Որ ոչ միայն հին, այլև միջնադարյան Հայաստանում կանայք իրավազուրկ էին՝ այդ են ապացուցում կանոնական այլ որոշումներ ևս։ Այսպես օրինակ. կանանց արգելված էր հանգես գալ դատարաններում ոչ միայն որպես հայցվոր կամ պատասխանող, այլև որպես վկա։ «Իսկ զկանայս ոչ է պարտ ընդունել վկայս, այլ արբանեակս վկայից»։ Բայց եթե «այնպիսի ինչ պատահէ զի կանայք միայն իցեն իրաց ինչ տեսողք եւ վկայք... պարտ է զի կրկին իցեն նոքա բան զարսն, զի արանց վկայն երկու կամ երեք հրամայեցաւ, եւ նոքա լիցին չորս կամ վեց»։ Ավելին, օրենսդիրները արգելում են վկա կանանց ներկայանալ դատարան և այնտեղ տալ վկայություն։ Նրանք վկայություններ կարող են տալ տանը միայն և այն էլ «հաւատարիմ արանց» միջոցով[12]։

3. Հողային, գույքային սեփականատիրության և ժառանգական իրավունքը։ Հայ ֆեոդալական եկեղեցին, հոգևոր ֆեոդալական ավագանին խիստ մտահոգված էին անձեռնմխելի հռչակել եկեղեցիների, վանքերի, հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների, «սեպհական» ժառանգությունը։ Կանոնական բազմաթիվ որոշումների մեջ հետևողականորեն անցկացված է այն գրությունը՝ «թէ ի սկզբանէ որպիսի հրաման ի սրբոյն Գրիգորէ է լեալ՝ նոյնպէս եւ եղիցի... զժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրեւ զաղատութիւն է... ազատ ի հարկէ եւ բեկարէ»[13]։ Քրիստոնեության մուտքից հետո, ասված է Սահակ Պարթևի կողմից մշակված կանոններից մեկում (ԾԱ), հայ մեծամեծ նախարարները, իշխանները եկեղեցիներին «վասն անձանց փրկութեան» նվիրում են «զգեաւզս եւ դաստակերտս եւ զգանձս ոսկւոյ եւ արծաթոյ...»[14]։

Մի շարք կանոններ արգելում են վաճառքի հանել վանքապատկան, եկեղեցապատկան հողերը, գյուղերը։ Այսպես օրինակ, արգելվում է վաճառքի հանել «...վասն ընչից որ անուանեալ իցէ եկեղեցւոյ զինչ եւ իցէ՝ թէ գեաւղք թէ մարգք եւ կամ այլ ինչ...»[15]։

Սահակ Պարթևը նույնպես անձեռնմխելի է հռչակում եկեղեցու «սեպհական ժառանգությունն»։ Եթէ որևէ մեկը, սահմանել է հայոց հայրապետը, «ուտէ եկեղեցւոյ իրս՝ տացէ ընդ միոյն չորս»։

Արդեն IV—V դարերում հայ եկեղեցին, հոգևոր ֆեոդալական ավագանին տնտեսական այնպիսի հզորության էին հասել, որ աշխարհիկ ֆեոդալներն էկսել էին դաժան ու համառ պայքար հոգևոր կալվածատիրական ձգտումները եթե ոչ վերացնելու՝ գոնե սահմանափակելու համար։ Այդ պայքարն այնքան էր սրվել, որ Դվինի ժողովն ստիպված հատուկ որոշում է կայացնում և դատապարտում հայ «ազատանիի» արարքները։

«Ոմանք յազատաց,— ասված է Դվինի ժողովի Ժ կանոնում, ոչ միայն «ի վերայ վանաց իշխանութիւնս առնէն», այլ կամենում են վանականներին պատնքերից «հանեն եւ հարկանեն»։ Ավելին, հայ ազատներից շատերն էլ, որոնք ունեն «սեպհական» գյուղեր, հարկատու բնակչություն ու քաղաքական իշխա-

11 Նույն տեղում, էջ 447։

12 Մխիթար Հրոշ, Դատաստանագիրք, էջ 40—41։

13 Կանոնագիրք Հայոց, Ձեռագրերի համեմատությամբ, խմբագրեց Արսեն Ղլտճյան, Թիֆլիս, 1913, էջ 123—125։

14 Կանոնագիրք Հայոց, էջ 412։

15 Նույն տեղում, էջ 164։

նութիւն, դրանով երբեք չեն բավարարվում, այլ «յոլովք չարակնութեան առնեն», ջանում են «զժառանգաւորս եկեղեցւոյ... ի ծառայութիւն եւ ի ստրկութիւն արկանել... զոր չէ արժան եւ օրէն»[16]։

4. «Քրիստոնեական մեծի զտատաուրութեան» իշխանությունը։

Հայ եկեղեցու, հոգևոր ֆեոդալական ավագանու ձեռքում էր կենտրոնացված ոչ միայն օրենսդիր, այլև գործադիր ու դատական իշխանությունը։ «Կանոնագիրք Հայոց»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցական ժողովները, առաքելական կանոնները իրավունք են վերապահել հոգևոր դասի ավագանուն դատել և պատժել ոչ միայն հոգևորականներին, այլև աշխարհիկ քաղաքացիներին։

«Կանոնագիրք Հայոց»-ի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանցանքներ էին համարվում հավատուրացությունը, աղանդներին հարելը և նույնիսկ համակրելը, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական սեփականատիրության դեմ ոտնձգություններ կատարելը, հայ «ազատանիին» անարգելը, հեթանոսական սովորույթներին հարելը, մերձամուսնությունը, ծառայությունից փախչելը, ֆեոդալական, վանական, եկեղեցական հարկերն ու տուրքերը չվճարելը, պարհակները չկատարելը, գողությունը, ավազակությունը, մարդասպանությունը, հայրենիքի դավաճանությունը և առանձնապես «խոովարար» և «խոովասեր» ծառա-աղախինների, շինականության խոովությունները, հուզումները, ապստամբությունները։ «Կանոնագիրք Հայոց»-ի կանոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք ունեն սոցիալ-դասակարգային խիստ ընդգծված բովանդակություն։ Այսպես օրինակ՝ «հանցապարտ», «օրինազանց» մարդկանց համար, եթե նրանք չեն պատկանում հայ ազատանիի դասին, նախատեսված են պատժիչ բոլոր միջոցները և նույնիսկ՝ մահապատիժ, բայց եթե այդ հանցանքները կատարել են նախարարները, ազատները, ապա միայն ապաշխարություն։ Ապաշխարում են այն բոլոր տերերը, որոնք խոշտանգում, մահապատժի են ենթարկում իրենց հպատակներին և հատկապես՝ ծառաներին։ Աթանաս Աղեքսանդրացին անհեթաղանդության պատճառով ծառային սպանող տիրոջ համար սահմանել է ապաշխարանք միայն[17]։

Շահապիվանի ժողովում մշակված կանոնները հանցապարտների և հերետիկոսների համար նախատեսում են դանահարություն, աքսոր, ճակատներին «զվնեսդրոշմի խարանում, ջղերը կտրել և այլն։ Եթե, սահմանված է ԺԹ կանոնում, որևէ հոգևորական «ի մեղնէութեան գտցի» նրա ճակատին պետք է խարանել «զուեսդրոշմ», բայց եթե նա կրկնի իր հանցանքը, ապա կանոնը իրավունք է վերապահում ոչ միայն կտրել նրա ջղերն ու գողենոց տանել, այլև նույն պատժին ենթարկել կնոջն ու երեխաներին. եթե «արք կանամբք և որդովք գտցին յաղանդին, զարանցն և զկանանցն և զիրազէտ մանկանցն զջիղսն կտրեսցեն, զուեսդրոշմ ի ճակատն դիցեն եւ ի գողենոց տացեն...»[18]։

Առաքելական ժողովները մահապատիժ են հաստատել այն մայրերի համար, որոնք «պոռնկին եւ զմանկունս սպանանեն»[19]։ Մահվան և ցմահ տաժանակիր բանտարկության են դատապարտվում նաև նրանք, ովքեր «...գաղտնի

16 Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 126—127։
17 Նույն տեղում, էջ 303։
18 Նույն տեղում, էջ 461—462։
19 Նույն տեղում, էջ 170։

մահարեր դեղովք... խողխողեն զորդիս մարդկան եւ որք հրով կիզուն եւ հրդեհեն զվաստակս եւ զշինուածս... եւ մեծամեծ աւերիս եւ բազում հարուածս. բազմադիմի եւ ազգի ազգի չարիս ածեն որդւոց մարդկան»։ Մահվան են դատապարտվում նաև նրանք, ովքեր «զսրբութիւնս կործանեն»[20]։

5. Հոգևոր դասի վարքն ու բարքը։ «Ի պոռնկութեան... ի գողութեան» «ըմբռնեալ» հոգևորականը, լինի եպիսկոպոս, երեց, թե սարկավագ, անմիջապես կարգալույծ է արվում[21]։ Կանոնական որոշումներում կան բազմաթիվ հոդվածներ այն մասին, որ ազահ հոգևորականները պայքարում են «զայլոց վիճակն» հափշտակելու համար. գործադրում են «բռնութիւն», վերցնում են կամ տալիս են կաշառք, զբաղվում են վաշխառությամբ, իրենց արծաթը տալիս են «ի վարձու» և գանձում բարձր տոկոսներ[22]։

Այս և ուրիշ այլանդակ երևույթներն այնքան լայն տարածում էին գտել հոգևոր հայրերի միջավայրում, որ Կանոնագիրքն այն դատապարտում է որպես հասարակական չարիք։ Կանոնական շատ որոշումներ արգելում են հոգևորականներին զբաղվել վաշխառությամբ, փոխտվությամբ, վարել պետական կամ զինվորական պաշտոններ, ծառայել որպես հարկահավաք կամ «գրոց հարկացն»։ Կանոնագրքում կան բազմաքանակ հոդվածներ ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ ֆեոդալական միջավայրում լայն տարածում գտած վաշխառուտարական գործարքների, փոխտվության և այլ «զազրելի» արարքների դեմ. Կան բազմաթիվ կանոններ, որտեղ դատապարտվում է հարբեցողությունը անբարոյականությունը։ Արգելվում է վանքերում ու եկեղեցիներում պահել կովկիթ, հացթուխ և ծառա-աղախին կանայք[23]։ Սահակ Պարթևի, Ներշապուհ Մամիկոնյանի և Ներսես եպիսկոպոսի կողմից մշակված կանոնները պախարակում են այն հոգևոր հայրերին, որոնք իրենց հպատակներից ոչ միայն հարկեր ու տուրքեր են գանձում, այլև «ագահութեամբ զոսկոյ եւ արծաթոյ մթերս են մթերում։ Հոգևորականների մի մասը, ասված է Ներսես եպիսկոպոսի և Ներշապուհ Մամիկոնյանի ԼԵ կանոնում, փոխանակ «կրօնաւորութեամբ զբաղվելու, դարձել են «ձիարոյծք եւ վաճառականք եւ վաշխառուք»[24]։

«Քահանայք, կարդում ենք ԼԲ կանոնում, մի արբեցողք եւ մի հանգանակողք եւ մի արծաթագին աղախնայս ստանալ եւ կամ ի կապինաց պոռնկաց ի տունս տանել զգարշելիսն, զոր ոչ հրամայեն աւրէնքս»[25]։ Հոգևորականների զազրելի գործերը, չար արարքները դառնում են «բազում յուղիցն եւ մեծամեծ ամբոխիցն» պատճառներ. մարդիկ դժգոհում են, տրտնջում, ապստամբում, որովհետև այդ զազրելի արարքները ոչ չափ ունեն և ոչ սահման[26]։

6. Հարկերը, տուրքերը, ֆեոդալական պարհակները։ «Կանոնագիրք Հայոց»-ում չկան համապատասխան վկայություններ հարկերի, տուրքերի, ֆեոդալական պարհակների տեսակների ու չափերի մասին, սակայն մի շարք կանոններից ակնհայտ է դառնում, որ հայ շինականությունը վանքերին ու եկե-

20 Նույն տեղում, էջ 174—175։
21 Նույն տեղում, էջ 80։
22 Նույն տեղում, էջ 127—128։
23 Նույն տեղում, էջ 489։
24 Նույն տեղում, էջ 490։
25 Նույն տեղում, էջ 489։
26 Նույն տեղում, էջ 41—42, 80, 127—128, 245, 372, 452, 486 և հտ.։

դեցիներին վճարել է «հաս», «պտուղ», «մուտ» և «տասանորդ» կոչված հարկերն ու տուրքերը։

Սահակ Պարթևի կողմից մշակված ԼԲ կանոնում սահմանված են եկեղեցիներին վճարելիք հարկերի տեսակները։ Դեռևս մեր նախնիները կարգել են, ասված է այնտեղ, որ «Հատկաց եւ ագապաց եւ զայլոց տաւնից» ժողովուրդը «սիրով եւ լրջմտութեամբ» պետք է եկեղեցիներին «որպէս աւրէն է» վճարի «զպտուղս»։ «Պտուղ» կոչված հարկն իր մեջ իմաստավորում էր «զպտուղ յամենայն արմտեաց»[27]։ Ներսես եպիսկոպոսի և Ներշապուհ Մամիկոնյանի կողմից մշակված կանոններում սահմանված է, որ հարկատուները հոժարությամբ և անխափան պետք է վճարեն «զպտուղս եւ զմուտս» հարկերը։ ԺԳ կանոնից ակնհայտ է դառնում, որ հարկեր գանձելիս եկեղեցին նկատի է ունեցել երդ-ծուխը։ Ամեն մի երդ-ծխից գանձված «պտուղ և մուտ» կոչված հարկերը բաժանվել են հետևյալ կերպ. «Գլխաւոր քահանայիցն» բաժին է հանվել «Ը մասունք եւ կէս մասին, եւ այլ քահանայքն մէն Ը մասունս», իսկ սարկավագներին՝ «մի մասն եւ կէս մասին», դպիրներին և այրի կանանց «մի մասն առանց ամենայն հակառակութեան»[28]։

Մի շարք կանոններում պահպանվել են ուշագրավ վկայություններ այն մասին, որ նյութական բարիքներ արտադրողները հարկեր ու տուրքեր են վճարել նաև արքաներին։ Այսպես, օրինակ, Շահապիվանի ժողովի կողմից մշակված Ը կանոնում ասված է, որ եթե որևէ մեկը «շնարարոյ» վարքի տեր է և «ակն» ունի այլ կնոջ վրա և այդ պատճառով բաժանվում է կնոջից, նրա շարժական ու անշարժ կայքն ու գույքը «բաժանեսցեն հասարակաց. զկեսն կնոջն տացեն... զարքունի հարկն ողջ արասցեն»[29]։ Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի կողմից մշակված Ե կանոնը իրավունք է վերապահում կարգալույծ անել հոգևորական «երկականանաց», զրկել նրանց «ի պտղոյ և ի մտից սրբոյ եկեղեցւոյ», իսկ տգետները «մի՛ իշխեսցեն մտից եկեղեցւոյ... վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զհայրենի հող և զջուր կալցին և յարքունիս հարկ տացեն»...[30]։

7. Հայ ֆեոդալական հասարակության դասային ու սոցիալական կազմը։

Հայտնի է, որ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան ստորաբաժանվում էր երկու հիմնական դասակարգի, բազմաթիվ դասերի ու խավերի միջև։ Վաղ ֆեոդալական հայ հասարակության դասային ու սոցիալական կազմն իր արտահայտությունն է գտել նաև «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ։ Հայ հասարակության ամենաբարձր աստիճանին միշտ էլ դասված են եղել մեծամեծ իշխանները, ավագ և կրտսեր նախարարները, ազատները, սեպուհները, ոստանիկները, իսկ ստորադաս աստիճանում՝ ռամիկները, գեղջուկները, շինականները և հատկապես «լոկ ի ստացուածոց» ծառա-աղախինները։

Կանոնագրքի մի շարք կանոններ մեզ հնարավորություն են տալիս ասելու, որ հայ շինականությունը համարվում էր ֆեոդալական հասարակության ստորադաս, հարկատու դասակարգը[31]։ Շինականների և ազատների սոցիալական դրության տարբերությունն ամենից բացորոշ տրված է Շահապիվանի

27 Նույն տեղում, էջ 384։
28 Նույն տեղում, էջ 482—483։
29 Նույն տեղում, էջ 435։
30 Նույն տեղում, էջ 480։
31 Տե՛ս նույն տեղում, էջ 388։

ժողովում մշակված ու հաստատված Գ, Դ, Ե, Է, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ կանոններում։ Բոլոր կանոններում հանցապարտ «աղատի» համար նախատեսված են դրամական տուգանք և ապաշխարություն միայն, իսկ նույն հանցանքը գործած շինականի համար բացի դրամական տուգանքից, ապաշխարությունից նաև դանահարություն, հարկադիր ու տաժանակիր աշխատանք և այլն։ Այսպես, օրինակ, ժողովը դատապարտում է բոլոր նրանց, ովքեր «Կին ունիցեն եւ պոռնկեսցեն» կամ թե կանանց արձակում են «առանց բոնի պոռնկութեան» կամ առանց «արատի ինչ չար ի մարմնոյ» կամ թե «ի հարցուկս երթան կամ ի դիւթել.. կամ կոծ դնեն ի մեռելոյ»։ Այս և այլ հանցանքներ գործած մարդը եթե «աղատ է եւ գան չէ մարթ հարկանել», ենթակա է միայն 200 դրամ տուգանքի և 2 տարվա ապաշխարության, բայց եթե նա «շինական է գան յոլով արրցի Ճ (100) դրամ տուգան տացէ յեկեղեցի...»։ Մի դեպքում «աղատի» համար հաստատված է 200, մյուս դեպքում 300—1200 դրամ տուգանք. ամեն պարագային շինականի դրամական տուգանքը կազմում է «աղատի» տուգանքի կեսը միայն։ Բայց շինականի համար նախատեսվում է 2—10 տարի հարկադիր ու ծրի աշխատանք։ Այս առումով խիստ ուշագրավ է ԺԲ կանոնը։ Այստեղ ասված է, որ եթե «զկին հաւր որդի ունիցի... եթէ հայր զորդւոյ կին ունիցի կամ եղբայր զեղբաւր... եւ եթէ կնոջն կամաւք իցէ խառնակութիւնն.. կալցին զկին եւ յաւրկանոց տացեն Ժ (10) տարի ադասցէ գոդեացն. ապա եթէ աղատ է եւ ի գոդիսն չերթայ՝ 3 (300) դրամ տացէ նոցա»[32]։ Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներից կախման վիճակում էին գրված շինականների շարքերից դուրս եկած աշխատամիջոցները և հողակտորները կորցրած մշակները։ Հայաստանում մշակների թիվը շատ մեծ էր։ Նրանց մի մասն աշխատում էր «արքունի հողերի» վրա և հայտնի էր «արքունի մշակք» անվան տակ, իսկ մյուս մասն աշխատում էր հոգևոր և աշխարհիկ ֆեոդալների մոտ։ Դժբախտաբար Կանոնագրքում մշակների մասին բացի մի, և այն էլ մշուշապատ վկայությունից, այլ փաստեր չկան։ Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի Լ կանոնում ասված է, որ ընտանիքի թե՛ մեծերը, թե՛ որդիները և թե՛ մշակները «մեծի շարաթուն հրագալուցին... ի տունջեան աւրինաց մի հաղորդեսցին»[33]։ Այս կանոնը ուշագրավ է միայն մեկ առումով. այստեղից երևում է, որ մեծ և հարուստ ընտանիքներն ունեին ոչ միայն ծառա, աղախիններ, այլև մշակներ։ Եթե ծառա-աղախինները աշխատում էին ֆեոդալների տանը որպես նաժիշտներ, դայակներ, խնամակալներ և այլն, ապա մշակները կատարում էին երկրագործական աշխատանք, աշխատում էին անասնապահության բնագավառում ու շինարարական կառուցումների վրա և այլն։

«Կանոնագիրք Հայոց»-ի ուշադիր ուսումնասիրությունը մեզ հնարավորություններ է ընձեռում ցույց տալու, որ վաղ ֆեոդալիզմի շրջանում բացի շինականներից, գաղջուկներից, ռամիկներից կային նաև բազմաքանակ ծառա-աղախիններ, հարճեր, վարձկաններ։ Կղեմի ԺԵ, ԺԶ կանոնները խստիվ արգելում են եպիսկոպոս, երեց կամ սարկավագ ձեռնադրել նրանց, ովքեր «ընդ երկուս ամուսնութիւնս խառնակեցաւ... կամ հարճս ստացաւ... կամ զաղախին կամ զբոզ»[34]։ Որ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները պահում էին բազմաթիվ ծառա-

32 Նույն տեղում. էջ 446, տե՛ս և 433—434, 435—436, 441—442, 446 և հտ.։
33 Նույն տեղում, էջ 488։
34 Նույն տեղում, էջ 79։

ներ, աղախիններ, հարճեր և սրանք դրված էին հայ ֆեոդալական հասարակության ստորադաս աստիճանում, այդ են ապացուցում այլ փաստեր ևս։ Այդ նույն կանոնախմբի ՀԶ կանոնը թույլ է տալիս ծառաներին ստանալ հոգևոր կոչումներ ու պաշտոններ միայն այն դեպքում, եթե կա տերերի համաձայնություն. եթե ծառան հեղ է, հնազանդ, եթե նա «խոովարար» ու «խոովասեր» չէ։ «Ծառայս ի ժառանգաւորութիւն ընձեռել առանց տէրանցն կամաց՝ ոչ հրամայեմք... քանզի տանցն կործանումն է այս գործ. ապա եթէ երբեք արժանի երևեսցի ծառայն առ ի ձեռնադրութիւն աստիճանի... և թողացուսցեն տեարք իւր եւ աղատասցեն եւ ի տանէն ի բաց առաքեսցեն՝ եղիցի»[35]։

Մի շարք կանոններից ակնհայտ է դառնում, որ ծառային, աղախնուն, հարճին գանահարող, խոշտանգող և նույնիսկ մահապատժի ենթարկող տերերը կամ անպարտ են հռչակվում կամ լավագույն դեպքում ապաշխարում են միայն։ Աթանաս Աղեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Շահապիվանի ժողովին հավաքված հոգևոր հայրերը իրավունք են վերապահում տերերին խիստ դատաստան տեսնել «յանհնազանդութեան» մեջ բռնված ծառա-աղախինների հետ։

«Եթե ուրուք ծառայ յանհնազանդութեան գտցի եւ տէրն նորա առ բացում անգամ զայրանալոյն հարցէ եւ սպանցէ», պատիժը սահմանափակվում է միայն ապաշխարությամբ[36]։ Խիստ դատապարտվում և նզովվում են նաև այն ծառաները, որոնք «...ապստամբին եւ գնան ի տեառնէ իւրեանց»[37]։ Խստիմ՝ արգելվում է կին ծառա-աղախին-հարճերին ամուսնանալ «...արտաքոյ կամաց տեառնէ իւրեանց...»[38]։ ...Եթե որևէ մեկը խախտում է այս կանոնը, ապա նրա ամուսնությունը դիտվում է որպես «պոռնկութիւն»[39]։ «Եղին ոմանք,— ասված է Ներսեսի և Ներշապուհի կանոններում,— և վաշխս վասն դահեկանաց իւրեանց», ոմանք էլ իրենց կանանց վաճառքի են հանում «...որպես ծառայս եւ այլքն ետուն վարձանս կանանց իւրեանց»[40]։ Կանոնագրքում կան շատ հոդվածներ, որոնք հայ ֆեոդալական հասարակության ստորադաս խավերին ու դասերին միշտ էլ հակադրում են «աղատներին» և մատնացույց անում առաջինների «անազատ» և վերջինների «աղատ» կացությունը[41]։

8. Սոցիալական շարժումները և դասակարգային հակամարտությունները.

«Կանոնագիրք Հայոց»-ում պահպանված վկայությունների ուսումնասիրությունը մեզ հիմքեր է տալիս վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանում ծավալված սոցիալական շարժումներն ու դասակարգային հակամարտությունները բաժանել երկու հիմնական էտապների. ա) պասսիվ պայքարը, որն արտահայտվել է նրանով, որ շահագործվող դասերն ու հասարակական խավերը կամ անձամբ կամ առանձին ընտանիքներով և նույնիսկ առանձին խմբերով հակադրվել են աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալական շահագործմանը, անհատորեն կամ խմբովին հրաժարվել են վճարել հարկեր և տուրքեր, կատարել ֆեոդալական պարհակներ, չեն ենթարկվել դատական որոշումներին

35 Նույն տեղում, էջ 95—96։
36 Նույն տեղում, էջ 303։
37 Նույն տեղում, էջ 319։
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում, էջ 347—349։
40 Նույն տեղում, էջ 479։
41 Նույն տեղում, էջ 41, 404, 414, 415, 427, 466 և հտ.։

պայքարել են անհատ ֆեոդալների դեմ, ոչնչացրել են նրանց, հրդեհել ցանքսերը, կոտորել անասունները, սանձահարել են նրանց ոտնձգությունները իրենց անձի, ընտանիքի նկատմամբ կամ թե լքել են իրենց տերերին, փախել ֆեոդալական դաժան լծից ու շահագործումից դեպի անառիկ լեռները, անմարդաբնակ վայրերը և այնտեղ հիմնադրել նոր համայնքներ։

բ) Հայտնի է, որ դասակարգային պայքարի բարձրագույն ձևը զինված ապստամբությունն է։ Զինված ապստամբության ժամանակ արդեն հանդես է գալիս շահագործվող դասակարգը և սկսում է պայքարը ոչ միայն շահագործող դասակարգի, այլև նրան հովանավորող պետության դեմ՝ ճորտական շահագործումից, ստրկությունից, աշխատավճարումներից, հարկերից ու տուրքերից ազատագրվելու, իր կյանքի ու աշխատանքի պայմանները բարելավելու և հնարավորություն ստեղծելու քիչ թե շատ մարդավարի ապրելու համար։ Վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանում լայն ծավալ է ստանում պայքարի առաջին ձևը։ Աշխատավոր ժողովրդի միջավայրում առաջացած տրտունջները, հուզումները, խռովությունները արմատախիլ անելու, մասսայական փախուստն արգելակելու համար հրավիրվում են հոգևոր ժողովներ, մշակվում են խիստ ու դաժան կանոններ այն «խռովարար», «խռովասեր», «անհնազանդ», «ապրստամբ» մարդկանց դեմ, որոնք անարգում, արհամարհում են հոգևոր դասին, մերժում են պաշտոնական եկեղեցու ծիսակատարությունները, հրաժարվում են վճարել հարկեր ու տուրքեր, կատարել ֆեոդալական պարհակներ, որոնք լքում և փախչում են «ի տերանց իւրեանց»։ «Ազգային» կամ «հոգևոր» ժողովների, եկեղեցու առաքյալների կողմից մշակված, հաստատված և քաղաքացիական բրենքի ուժ ստացած կանոնները դատապարտում են դասակարգային ամեն մի ոնդվզում, պախարակում պաշտոնական եկեղեցուն խորթ ամեն մի գաղափարախոսություն։ Առաքելական կանոնները կրոնա-բարոյախոսական քարոզներով ջանում են մարդկանց մեջ արմատացնել այն գաղափարը, թե ովքեր անարդում, անգոսնում են հոգևորականին, պետք է լավ հասկանան, որ «զԱստուած անարգեն»[42]։

Կանոնական շատ որոշումներ անպարտ են հայտարարում կամ թե սահմանում են միայն ապաշխարանք այն տերերի համար, որոնք խոշտանգում են կամ նույնիսկ մահապատժի են ենթարկում ապստամբ և տերերին լքող ծառաներին[43]։

Վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում մասսայական «եղծումն եւ քայքայումն» այնպիսի լայն ծավալ էին ստացել, որ IV դարի վերջին Պոլֆոգոնիայի հոգևոր հայրերը հրավիրում են Գանգրայի, իսկ հայ եկեղեցու առաջնորդները՝ Աշտիշատի եկեղեցական ժողովները՝ հերետիկոսների, հերձվածողականների դեմ կազմակերպված պայքար ծավալելու համար։ Գանգրայի ժողովում հավաքված հայրերը ոչ միայն մշակում են խիստ ու դաժան կանոններ ուղղված սոցիալական շարժումների դեմ, այլև հատուկ նամակով դիմում են հայ եկեղեցու առաջնորդներին և կոչ անում անհաշտ ու դաժան պայքար սկսել Հայաստանում և Փոքր Հայքում լայն ծավալ ստացած «հերետիկոսների» դեմ։ Ժողովի Դ կանոնը դատապարտում է այն բոլոր անհնազանդ ծառաներին, որոնք արհամարհում և հեռանում էին ծառայությունից։

---

42 Կանոնագիրք Հայոց, էջ 43։

43 Նույն տեղում, էջ 303, 319—320։

«Ոյք գծառայ... արհամարհեալ զտեարս իւրեանց եւ հեռանալ ի ծառայութենէ նոցա և ոչ ամենայն փութութեամբ պատուել և պաշտել զնոսա... նզովեալ լիցին»[44]։

Գանգրայի ժողովում հաստատված մի շարք կանոնները մեզ հնարավորություն են տալիս ասելու, որ ժողովի նախօրեին հանդես էին եկել շատ «հեր ձուածութիւնք, որք... անմտութեամբ իւրեանց... եւ այլ իմն այլաշոն կարգս ի մէջ բերեալ թիւրէին զուղիղ կարգս եկեղեցւոյ»[45]։

Հերետիկոսները ժխտում էին պաշտոնական եկեղեցու անհրաժեշտությունը, նրա ծիսակատարությունները և քարոզում էին, թե հավատացյալները իրենց աղոթքը կարող են առանց եկեղեցու և հոգևորականության միջնորդության լսելի դարձնել արարչին։

«Ոյք արտաքս քան զեկեղեցին ժողովս ժողովեցին եւ արհամարհիցեն զեկեղեցին... նզովեալ լիցին»[46]։

Սկսած IV դարից սոցիալական շարժումները և դասակարգային հակամարտությունները լայն ծավալ են ստանում նաև Հայաստանում։ Մի կողմից սեփական շահագործող դասակարգի շահատակությունները, մյուս կողմից օտար բռնադատիչների արշավանքներն ու ասպատակությունները ծայր աստիճանի սրել էին դասակարգային պայքարը շահագործող և շահագործվող դասակարգերի միջև։ Դասակարգային պայքարը եթե ոչ վերացնելու, գոնե ջլատելու, թուլացնելու համար Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ IV դարի երկրորդ կեսին հրավիրվում է Աշտիշատի հայտնի ժողովը։ Ժողովը պահանջում է թագավորից, մեծամեծներից և բոլոր նրանցից, ովքեր «...ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն», գութ ունենալ նրանց նկատմամբ, չնեղել «աւելի տարապայմանս հարկօք... քան զչափն յուշ առնելով, զի եւ նոցա տէր գոյ յերկինս»։ Աշտիշատում հավաքված հոգևոր և աշխարհիկ ֆեոդալները միաժամանակ պատվիրում են ծառաներին «կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տէրանց»[47]։

Ոչ միայն «ազգային» ժողովներում հոգևոր հայրերի կողմից մշակված կանոններում, այլև մեր մատենագիրների մոտ պահպանված են մի շարք վկայություններ այն մասին, որ վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանում սկսվել էին «անապատականների», «բորբորիտների» և հատկապես «մծղնէ» շարժումները։ Մ. Խորենացին, ուրվագծելով հայ ֆեոդալական հասարակության տարբեր դասերի ու խավերի սոցիալական գիմանկարները, անարգանքի սյունին գամելով արծաթասեր քան աստվածասեր, կեղծավոր, վաճառաշահ, կաշառակեր կրոնավորներին, «արծաթով ընտրեալք» եպիսկոպոսներին, վարդապետներին, կողոպտիչ, անհարիր, սնապարծ, հեշտասեր, գողող ու հպարտ զորավարներին, գող, ժլատ, ագահ, հափշտակող «գողակից գողաց» աշխարհավեր իշխաններին», տմարդի, խարդախ, ստախոս, կաշառակեր դատավորներին, խիստ ու դաժան, ժողովրդի վրա «բեռինս... անհունս եւ դժվարակիրս» դնող թագավորներին, օրենսդիրներին», ասում է, որ սրանց շահատակությունների հետևանքով է, որ մեծ ու փարթամ աշխարհն Հայոց դարձել է օտար բռնադատիչների զոհը։

---

44 Նույն տեղում, էջ 193։
45 Նույն տեղում, էջ 190—191։
46 Նույն տեղում, էջ 194։
47 Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 15.

Ոչ միայն Խորենացին, այլև V դարի մեր բոլոր մատենագիրները, փիլիսոփաները, հոգևոր և աշխարհիկ գործիչները սուր քննադատության են ենթարկում հերետիկոսներին։ Նրանք, հատկապես եղնիկ Կողբացին, Դավիթ Անհաղթը, Կորյունը, ջանում էին մերժել հերետիկոսների քարոզած գաղափարախոսությունը, հիմնավորել քրիստոնեական վարդապետությունը, արդարացնել այն բիրտ ու դաժան միջոցառումները, որ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները գործադրում էին հերետիկոսների նկատմամբ։ Երբ Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը համոզվեցին, վկայում է Կորյունը, որ «բորբորիանոսների» աղանդը լայն տարածում է գտել Հայաստանում և ունի շատ հետևորդներ, ձեռնարկեցին համոզել, խրատել և դարձի բերել աղանդավորներին, սակայն, երբ այդ միջոցներն անզոր հանդիսացան, այն ժամանակ, շարունակում է մատենագիրը, «...սաստկագոյն խոշտանգանօք պատուհասէին ի բանգ եւ ի կապանս, եւ յայլ ինչ տանջանարանս, իսկ յորժամ այնու եւ պակասեալք ի փրկութենէ գտանէին Աստուծոյ ատելիքն, ապա խանձեալս եւ մրեալս եւ պէս պէս խայտառականօք հալածէին յաշխարհէ»[48]։ Պատմական սկզբնաղբյուրների, հատկապես կանոնական որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հին Հայաստանում լայն տարածում էր գտել Նեստորի ուսմունքը։ Մի այլ աղանդապետի՝ Հովհան Դամասկոսցու կուսակիցները գործունեության լայն ասպարեզ էին գտել նաև Հայաստանում։ Բյուզանդական կայսրության հոգևոր պաշտոնյաները, կաթոլիկ եկեղեցու առաջնորդները ոչ միայն մեծ զգուշությամբ հետևում էին Փոքր Ասիայի հերետիկոսների գործունեությանը, այլև հատուկ նամակ-հրահանգներով պահանջում էին հայ եկեղեցու առաջնորդներից դաժան պայքար սկսել հերետիկոսների դեմ։ Նիկիայի, Գանգրայի ժողովների և այլ կանոնական շատ որոշումներ մեզ հնարավորություններ են ընձեռում ցույց տալ, թե ինչ էին քարոզում պաշտոնական եկեղեցու գաղափարական հակառակորդները։ Հերձվածողականները, արձանագրված է այդ որոշումներում, ոչ միայն մեծամեծ «ոճիրս» են գործում, այլև «դառնացուցանեն զԱստուած... նոքա եւ յՈրդւոյն ուրանան, նոքա և զՀոգին սուրբ հայհոյեն. նոքա եւ զարդար զարիւն հեղուն ի զոհել չարեացն. զայնպիսիսն առաջին կանոնն եւ զիրն չապրեցուցանէ եւ արժանի են մահու...»[49]։

Հերետիկոսները, ասված է մի շարք կանոններում, ոչ միայն քարոզում էին իրենց տխմար մտքերը, այլև գործում էին «զազգի ազգի այլանդակ գործս», այնքան որ ծառաները հեռանում էին «ի տերանց», իսկ աղախինները՝ «ի տիկնանց իւրեանց»[50]։ «Ազգային» կամ եկեղեցական ժողովները ոչ միայն դատապարտում, այլև պահանջում են արմատախիլ անել կամ «ի բաց կտրեալ զվնասակար զգաղձն եւ քաղեալ զորոմնն ի ցորենոյն», որպեսզի չաճի, չտարածվի, «սէզն մեղացն»[51]։

Սակայն սոցիալական և ոչ մի շարժում այնպիսի մեծ անհանգստություն չի պատճառել հայ եկեղեցու հայրերին, ինչպես այդ կատարել է մծղնեական շարժումը։ Այդ շարժման դեմ կազմակերպված պայքար ծավալելու համար

48 Կորյուն, Պատմութիւն Վարուց եւ մահուան Մեսրոպայ Վարդապետի մերոյ Թարգմանչի. Թիֆլիս, 1913, էջ 50—51։ Հմմտ. Մ. Խորենացի, էջ 336։

49 Կանոնագիրք Հայոց, էջ 172։

50 Նույն տեղում, էջ 191։

51 Նույն տեղում։

Հովասափ կաթողիկոսի ղեկավարությամբ 447 թ. հրավիրվում է Շահապիվանի հայտնի ժողովը[52]։

Շահապիվանի ժողովում մշակված, հաստատված և քաղաքացիական օրենքի ուժ ստացած կանոնները բաժանվում են երկու խմբի. առաջին մասում բավական ընդարձակ և պատճառաբանված տրված են սոցիալական շարժումների հանդես գալու դրդապատճառները. խիստ կերպով դատապարտվում են եկեղեցու ներսում և հոգևոր հայրերի միջավայրում արմատացած շահատակությունները, արծաթասիրությունը, վաշխառուական գործարքները. խարազանվում են աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ցոփ վարքն ու բարքը, «տրտնջացող», «անբարտաւան», «կաշառառու» քաղաքացիները, դատավորները և այլն։

Կանոնական որոշումների երկրորդ մասը, որն ավելի բիրտ ու դաժան է, ուղղված է բացառապես մծղնեական աղանդի դեմ. ժողովը պահանջում է ամենադաժան դատաստան տեսնել ոչ միայն աղանդավորների, այլև նրանց հովանավորողների, հարողների կամ նույնիսկ համակրողների հետ։

Շահապիվանի ժողովի Ա և Բ, ԺԴ կանոնները արգելում են ամուսնանալ կամ որևէ այլ կապ ունենալ մծղնեականների հետ։ Հոգևորականները, կամ ով «եւ իցէ ոք ի պաշտօնէից կամ յուխտէ», եթե հարում են պիղծերին, կամ ամուսնանում են աղանդավորների հետ, ոչ միայն անհապաղ կարգալույծ են արվում, այլև ենթարկվում են դրամական տուգանքների[53]։ Ավելի դաժան պատժիչ միջոցներ են սահմանված ԺԹ և Ի կանոններում։

Այս կանոններում իրավունք է վերապահված մծղնեական աղանդին հարած ծնողներից վերցնել նրանց երեխաներին և հանձնել «ի ձեռս սուրբ պաշտաւնէից Աստուծոյ, որ սնուսցեն եւ ուսուսցեն զնոսա ի հաւատս ճշմարիտս եւ յերկիւղ Տեառն»[54]։ Ժողովը պահանջում է դատական խիստ պատասխանատվության ենթարկել ոչ միայն հայ նախարարներին, այլև նրանց ընտանիքի անդամներին։

«Եթէ, սահմանված է Ի կանոնում, ի նախարարի տան գտցին պղծութիւնքն, կա՛մ կին նորա կա՛մ դուստր կա՛մ որդի կա՛մ ինքն իսկ գլխովին... ամենայն տամբ իւրով եւ ծննդովք եւ կենաւք նզովեալ լիցի. ի հրապարակ մի՛ խշխեսցէ գալ, ընկերք եւ աշխարհ ամենայն մի՛ հաղորդեսցին ընդ նմա, մինչեւ թէ ինքն իցէ ի պղծութեանն՝ ի սրբութիւն եկեսցէ»[55]։ Ժողովի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ էլ պաշտպանվում է դասային խարականությունը. եթե մծղնեական աղանդին հարող ստորադաս մարդկանց, շինականների և նույնիսկ գյուղական երեցների համար սահմանվում է ծեծ, ազվեսդրոշմ, հարկադիր աշխատանք, ապա ազատների ու նախարարների համար միայն նզովք և ապաշխարանք։

Որ դասակարգային հակամարտություններն ու սոցիալական շարժումները բավականին լայն ծավալ էին ստացել «Կանոնագիրք Հայոց»-ի կազմման ժամանակաշրջանում, այդ են ապացուցում նաև Աղվանից աշխարհի արքա Վաչագանի, Դվինի ժողովի և Հովհաննես Օձնեցու կանոնական որոշումները,

52 Նույն տեղում, էջ 425—426։
53 Նույն տեղում, էջ 429—432։
54 Նույն տեղում, էջ 461—462։
55 Նույն տեղում, էջ 464—465։

որոնցից առաջին երկուսը չեն մտել «Կանոնագիրք Հայոց»-ի մեջ։ Այստեղ քննարկվող հարցի առնչությամբ նրանք մեծարժեք սկզբնաղբյուրներ են։ Աղվանից արքա Վաչագանի կանոնների ներածության մեջ արձանագրված է, որ այդ պատմաշրջանում «...բազում հակառակութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց, եպիսկոպոսաց, քահանայից ...ազատաց եւ ռամկաց»[56]։ «Բազում հակառակութիւնքն» եթե ոչ վերացնելու, գոնե մեղմելու համար մշակվում են մի շարք կանոններ։ Նախ սահմանվում են հարկերի և տուրքերի որոշակի չափեր, այնուհետև մշակվում են մի շարք կանոններ շահատակությունների, կամայականությունների, կաշառակերության, անարդար դատավարության և հասարակական այլ չարիքների դեմ։ Այս իմաստով ավելի ուշագրավ են Ներսես Տայեցի կաթողիկոսի ղեկավարությամբ հրավիրված Դվինի ժողովի որոշումները։ Ժողովը քննարկում է հայ ֆեոդալական կյանքի բազմաթիվ հարցեր, առաջարկում է դեղատոմսեր եկեղեցու բարոյալքված հեղինակությունը վերականգնելու, վերացնելու նրա ներսում հանգես եկած «թուլութիւնքն» և «անկարգութիւնքն», արմատախիլ անելու խռովությունները և այլն։ Ժողովը միաժամանակ որոշում է, որ յուրաքանչյուր ոտնձգություն եկեղեցու, հոգևոր հայրերի դեմ՝ ոտնձգություն է արարչի դեմ։ Ժողովը խստիվ խարազանում է եկեղեցու «սեփական ժառանգութեան» դեմ հանգես եկած ազատներին, նախարարներին և հատկապես շինականներին։ Սրանց պետք է հայտնի լինի, որ «ի սկզբանէ որպիսի հրաման ի սրբոյն Գրիգորէ է լեալ՝ նոյնպէս եւ եղիցի... զժառանգութիւն սրբոյ եկեղեցւոյ իբրեւ զազատութիւն է, զոր երանելոյ սրբոյն Գրիգորի եւ թագաւորին մերոյ Տրդատայ զատուցեալ են»[57]։ Բնական ու հասկանալի է, որ այդ «ազատութեան» դեմ հանդես եկած ամեն մի շարժում պետք է դիտվեր և գնահատվեր որպես սատանայի արարք, չարի գործ։ Դվինի ժողովը նույնպես հետապնդում է երկու հիմնական նպատակ։ Նախ, նա բացորոշ կերպով դատապարտում է «ձիարուծք», «վաւաշոտք», «վաճառականք», «հարկահանք» հոգևորականներին, դաժան, ագահ «գողակից զողաց», «աշխարհականք իշխանաց» այն բանի համար, որ նրանք պայքարում են մեկը մյուսի դեմ, ջանում են ընդարձակել իրենց կալված տիրույթները, ձեռք բերել հպատակ ու հարկատու բնակչություն։ Այնուհետև ժողովը հատուկ կոչով դիմում է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին միասնական ճակատ կազմել ժողովրդական սաստկացող արտունջների ու ցասումների դեմ։ Դասակարգային դաժան գոտեմարտերի սարսափն այնքան ահեղ էր, որ հայ ուղղափառ հավատքի քարոզիչները ստիպված առաջարկում են դաշինք կնքել հայ լուսավորչական ու քաղկեդոնական դավանանքների մեջ՝ հայ և բյուզանդական եկեղեցիների և՛ ներքին և՛ արտաքին թշնամիների դեմ պայքարելու համար։ Դվինի ժողովում մշակված և հաստատված կանոններում մենք նկատում ենք վաղ ֆեոդալիզմի դարաշրջանը Հայաստանի սոցիալական շարժումների արձագանքները և նրանց դեմ կազմակերպված պայքարի մարտական ոգին։ Եվ վերջապես, հերետիկոսական, ըստ էության, սոցիալական շարժումների դեմ մի շարք կանոններ է մշակել ինքը, կանոնագիրք կազմողը՝ Հովհաննես Օձնեցին։

Հայոց հայրապետը վկայում է, որ իր օրերում էլ շատ անհավատներ և «սատանայի չար որդիներ» կրկին «...չոգան, զօղեցին յոլորտս ուրեք աշխար-

56 Կանոնագիրք Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 192։

57 Նույն տեղում, էջ 123։

հիս մերոյ»։ Նրանք, շարունակում է Օձնեցին, «սարսեալք կային յուղիղ կրօնից քրիստոսականաց» և դուրս գալով իրենց «յորջից... ի միասին ընթացեալ կուտեղան ամենայն ուստեք, որպէս անգեղք աշխարհաց... Եւ զանունն իւրեանց դախտախինդս յանդգնեցան կոխել զայնցանէ, որ զերկնից բարութեանցն բուռն հարեալ ունիցին յուսով»[58]։

Օձնեցին իր կանոնաշարքի ԻԹ, ԼԵ կանոններում պահանջում է, թե «Ոչ է պարտ ամենեւին անխտիր լինել եւ հաղորդութիւնս առնել ընդ հերձուածողաց», այլև «խորշել ի նոցանէ»։ Օրենսդիրը ասում է, որ «Ոչ է պարտ ի չարաղանդ մծղնէիցն տեղիս, որ կոչին պոլիկիանք, աւթել ումեք եւ կամ յարել եւ խաւսակից լինել եւ երթեւեկութիւն առնել, այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, գարշել եւ ատել զնոսա», որովհետև նրանք «որդիք սատանայի են եւ լուցկիք յաւիտենական հրոյն եւ աւտարացեալ են ի սիրոյ կամաց Արարչին։ Բայց եթե որեւէ մեկը «յարեսցի նոսա, եւ սիրելութիւն եւ բարեկամութիւն եկեսցէ, պարտ է զայնպիսիսն խոշտանգել եւ ծանր պատուհաս ի վերայ դնել... Ապա եթէ դարձեալ ի նմին գտցին վերստին, զայնպիսիսն հրամայեմք ամենեւին հատանել եւ արտաքս ընկենուլ իբրեւ զժանդախտս յանդամոց եկեղեցւոյ Քրիստոսի»[59]։

Այսպիսով, «Կանոնագիրք Հայոց»-ը իր մեջ ամփոփում է բազմաթիվ կանոնական որոշումներ, որոնք մեզ հիմքեր են տալիս պարզաբանելու վաղ ֆեոդալական Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի բազմաթիվ հարցեր։ Սակայն նրա նշանակությունն այսքանով չի սահմանափակվում։ Կանոնագրքի մեջ տեղ են գտել նաև շատ որոշումներ, որոնք շոշափում են իրավունքի, փիլիսոփայության և գիտության այլ բնագավառներին վերաբերող շատ ու շատ հարցեր։

ОТРАЖЕНИЕ СОЦИАЛЬНЫХ ОТНОШЕНИЙ В «АРМЯНСКОЙ КНИГЕ КАНОНОВ»

Проф. С. Е. АКОПЯН

(Резюме)

«Армянская книга канонов» историка, крупного законодеятеля, государственного и политического деятеля, католикоса VIII в. Иоанна Одзнеци является одним из редких и замечательных юридических и культурных памятников эпохи раннего феодализма и богатейшим историческим источником, проливающим свет на все стороны жизни того времени. Она представляет большой научный интерес не только для изучения истории правовой науки, но и для понимания всей социально-экономической и политической жизни древней Армении. Более того, она является неоценимым первоисточником для изучения жизни и быта армянского народа—его занятий, семейных социально-экономических и правовых отношений в период раннего феодализма. В «Книге канонов» ярко отразились также социальные движения и классовая борьба в Армении.

58 Յովհաննու Իմաստասերի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1883, էջ 39։
59 Կանոնագիրք Հայոց, էջ 533—535։